Արձանագրություն N 3
ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-21/7 ծածկագրով գնանշման հարցման
Գնահատող հանձնաժողովի նիստի (շարունակություն)

ք. Երևան

25 հունիսի 2021թ
ժամը 12:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Է.Հակոբյանը
անդամներ՝ Հ. Մարգարյանը, Ա. Սարգսյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի գնահատման արդյունքների մասին (շարունակություն)

(Է.Հակոբյան)

1. Գնահատող հանձնաժողովը. ուսումնասիրեց հայտերով ներկայացված փաստաթղթերը, այդ թվում առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և արձանագրեց, որ.

Մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրության մեջ առկա են անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, մասնավորապես.

1.1 «Ալֆա Էտալոն» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի նկարագրության սյունյակում հստակ չեն նկարագրված առաջարկվող ապրանքների տեխնիկական չափանիշները, առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

ա/ 1-ին չափաբաժնի ապրանքի տեխնիկակական բնութագրի նկարագրության մեջ հստակ չէ առաջարկվող ապրանքի «ներկառուցված բարձրախոսների քանակը - առնվազն 2», «Կետայնությունը-առնվազն Ultra HD/4K (3840 x 2160)», «Էկրանի թարմացման հաճախականությունը-առնվազն 60 Hz», «ներկառուցված բարձրախոսների քանակը-առնվազն 2», «դինամիկ կոնտրաստը-առնվազն 1000000:1»:

Հայտով ներկայացված չէ հեռուստացույցի շրջանակի առավելագույնը լայնությունը, որի առավելագույն չափը սահմանված է հրավերով:

բ/ 2-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկակական բնութագրի նկարագրության մեջ հստակ չէ առաջարկվող ապրանքի «Էկրանի թարմացման հաճախականությունը-առնվազն 60 Hz», «ձայնի ուժգնությունը-առնվազն 20 Վտ», «ներկառուցված բարձրախոսների քանակը-առնվազն 2», մուտքերի նվազագույն քանակը-HDMI - 3 հատ USB - 1 հատ:

գ/ հավելված 1.1-ի տեխնիկակական բնութագրի նկարագրության սյունյակում առաջարկվող ապրանքի նկարագրության հետ միաժամանակ ներկայացված է առաջարկվող ապրանքի մոդելի նկարագրությունը այլ գնային առաջարկով (UE85AU7100UXRU – 1515000 dram), ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված վավերապայմաններին և հավելված 2-ով առաջարկված գնային առաջարկին:

1.2. «ՎԻ ԷԼ ՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի նկարագրության սյունյակում առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

ա/ 1-ին չափաբաժնի ապրանքի տեխնիկակական բնութագրի նկարագրության մեջ հստակ չէ «մուտքերի նվազագույն քանակը HDMI - 2 հատ USB - 1 հատ»:

բ/ 2-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկակական բնութագրի նկարագրության մեջ հստակ չէ «մուտքերի նվազագույն քանակը HDMI - 4 հատ USB - 2 հատ»:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները, որոշեց.

ա/ ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-21/7 ծածկագրով հրավերի 8.8 կետով սահմանված պահանջների համաձայն կասեցնել հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով և հրավերով սահմանված կարգով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

բ/ ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքներ նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2021թ. հունիսի 29-ին ժամը 14:45-ին ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Է.Հակոբյան

անդամներ՝ _____ Հ.Մարգարյան

_____ Ա. Սարգսյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան